ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1200 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N 388-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի ապրիլի 7-ի «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» համաձայնագրի կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» N 388-Ա որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հավելվածի 1-ին կետի «Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը» սյունակում «Եվրասիական տնտեսական միությունում նավիգացիոն կապարակնիքների օգտագործմամբ ապրանքների փոխադրման հետագծելիությունն ապահովող ազգային օպերատորի (օպերատորների) ընտրությունից հետո 3 ամիս» բառերը փոխարինել «2024 թվականի դեկտեմբերի առաջին տասնօրյակ» բառերով.

2) հավելվածի 4-րդ կետի «Իրավական ակտի նախագիծը ներկայացնելու ժամկետը» սյունակում «2023 թվականի» բառերը փոխարինել «2024 թվականի» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ